ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2020թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով, և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի հ.178-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Կորյուն Գալստյանին, Հաբեթ Սարգսյանին, Ալլա Կարագոդինային և Նունե Գուլակյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Նորաշեն թաղամասի հ.37/8 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 209.96քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.30082017-01-0026 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն «Զոր-2» թաղամասում և տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 136.47քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Կորյուն Գալստյանին, Հաբեթ Սարգսյանին, Ալլա Կարագոդինային և Նունե Գուլակյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Նորաշեն թաղամասի հ.37/8 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 209.96քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.30082017-01-0026 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն «Զոր-2» թաղամասում և տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 136.47քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Երևանի քաղաքապետի 10.08.2017թ. հ.2720-Ա որոշումով տարածագնահատման 7-րդ գոտում Նորաշեն թաղամասի հ.37/8 հասցեում գտնվող 209.96 քմ մակերեսով հողամասը վաճառվել է աճուրդում հաղթող ճանաչված Կորյուն Գալստյանին: Օրենսդրությամբ սահմանված կարգով վերջինիս տրամադրվել է նախագծման թույլտվություն /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Սակայն, հաշվի առնելով կից գտնվող Մազմանյան փողոցի հ.5/1 բնակելի շենքի մի շարք բնակիչների բողոքները հողամասի նկատմամբ հետագա քաղաքաշինական փաստաթղթերը չեն տրամադրվել: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, որպես խնդրի լուծման տարբերակ, սեփականատերերին առաջարկվել է փոխանակել Նորաշեն թաղամասի հ.37/8 հասցեում գտնվող 209.96քմ մակերեսով հողամասը՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն «Զոր-2» թաղամասում գտնվող համարժեք հողամասով:

Փոխանակման արդյունքում ինչպես Երևան համայնքի, այնպես էլ հողամասի սեփականատիրոջ համար հնարավորություն կառաջանա հողամասերն արդյունավետ օգտագործել և կառավարել, ապահովել հողամասի հետագա կառուցապատումն ու բարեկարգումը, ստեղծել առավել քաղաքաշինական կարգավորված հատված, ինչպես նաև բարձրացնել հողամասի օգտագործման արդյունավետությունը:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ